600.0269.17.07.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 հուլիսի 2019 թվականի №269Ա
քաղ. Երևան

«ՖԱԼԿՈ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԳՈՒՄԱՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2009 թվականի հուլիսի 3-ի №353Ա որոշմամբ «ՖԱԼԿՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրված ռադիոհաճախականության օգտագործման №0592 թույլտվության գործողության ժամկետը սահմանված է մինչև 2019 թվականի հուլիսի 3-ը, և Ընկերությունն այն երկարաձգելու հայտով չի դիմել Հանձնաժողով,

բ) Ընկերությունը պատշաճ կարգով չի կատարել «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 17.1-րդ հոդվածով սահմանված ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների վճարման պարտավորությունը,

գ) Ընկերությունից հօգուտ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի 420 805 (չորս հարյուր քսան հազար ութ հարյուր հինգ) դրամ գումարի (հաշվարկված՝ մինչև 2012 թվականի սեպտեմբերի 1-ը) բռնագանձման վերաբերյալ առկա է Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2013 թվականի մայիսի 23-ին օրինական ուժի մեջ մտած դատական ակտը,

դ) Հանձնաժողովի 2014 թվականի հուլիսի 23-ի №302Ա որոշմամբ Ընկերությունը պարտավորեցվել է մինչև 2014 թվականի հուլիսի 23-ն ընկած ժամանակահատվածի համար ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների մասով հաշվարկված 556 775 (հինգ հարյուր հիսունվեց հազար յոթ հարյուր յոթանասուն-հինգ) դրամ պարտքը փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,

և հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասը, 17.1 հոդվածը, «Լիցենզավորման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 37-րդ հոդվածը և Հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 11-ի №231Ն որոշումը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից տասնօրյա ժամկետում №900005281812 հաշվեհամարով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցել ռադիոհաճախականության օգտագործման վճարի մասով 2014 թվականի հուլիսի 24-ից մինչև 2019 թվականի հուլիսի 3-ը հաշվարկված 1 519 858 (մեկ միլիոն հինգ հարյուր տասնինը հազար ութ հարյուր հիսունութ) դրամ պարտքը, որից 1 051 630 (մեկ միլիոն հիսունմեկ հազար վեց հարյուր երեսուն) դրամը ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարն է, իսկ 468 228 (չորս հարյուր վաթսունութ հազար երկու հարյուր քսանութ) դրամը՝ ժամկետանց պարտավորության համար հաշվարկված տույժը:
2. Ընդունել ի գիտություն, որ Ընկերությունն իրավասու է.
   1) սույն որոշման հրապարակումից հետո երեսնօրյա ժամկետում միջնորդել Հանձնաժողովին՝ վերանայելու այն.
   2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
17 հուլիսի 2019թ.